

17.04.25 - 18.04.25

11:00

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

Հայաստան, Երևան

Ս.թ. ապրիլի 17-18-ը ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի, «Մարդու իրավունքների գլոբալ կամպուսի» («Global Campus of Human Rights»), Մասստրիխտի համալսարանի և «Right Livelihood»-ի համագործակցությամբ կանցկացվի միջազգային գիտաժողով՝ նվիրված պատերազմների, զինված հակամարտությունների և հարկադիր տեղահանության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությանը:

Գիտաժողովը տեղի կունենա.

- **ապրիլի 17-ին՝ ժամը 11:00-15:00-ն, «Անի Գրանդ Հոթել» հյուրանոցի «Պանորամիկ» սրահում,**
- **ապրիլի 18-ին՝ ժամը 10:30-14:30-ը, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում:**

Գիտաժողովի երկօրյա քննարկումները կկազմակերպվեն հետևյալ առանցքային ուղղություններով.

1. *Չճանաչված պետություններում մարդու իրավունքների վիճակի համեմատական վերլուծություն,*
2. *Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների իրավական կարգավիճակ, սոցիալ-տնտեսական իրավունքներ և պետական արձագանքներ,*
3. *Երեխաների մասնակցություն՝ որպես տեղահանման հետևանքների ապրումի վկայություն,*

4. *Քաղաքական համակարգերի կայունությունը հիբրիդային պատերազմների համատեքստում,*
5. *Համագործակցություն և աջակցություն քաղաքացիական հասարակության ու պետական կառույցների միջև:*

Ամփոփում

- *արդյունքների ամփոփում, նորարար առաջարկությունների մշակման գործընթացի նախաձեռնում և քաղաքականության վրա ազդեցության գնահատում:*

Այս նախաձեռնությունը իրականացվում է նաև Մասստրիխտի համալսարանի «Երեխա-պատերազմ» («Child-War») նախագծի համատեքստում:

Գիտաժողովի բանախոսներից է Ռաջի Սուրանին («Right Livelihood» 2013թ. դափնեկիր, Պաղեստինի մարդու իրավունքների կենտրոնի հիմնադիր): Տեսաուղերձով հանդես կգա «Right Livelihood» 2022թ. դափնեկիր Օլեքսանդրա Մատվիչուկը (Ուկրաինա): Ելույթ կունենան փորձագետներ Մասստրիխտի համալսարանից, ԵՊՀ-ից, ՄԱԿ ՓԳՀ-ից, Կարմիր խաչի միջազգային կոմիտեից (ԿԽՄԿ), մի շարք այլ պետական կառույցներից և ՀԿ-ներից:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am